

Վ. Մ. Գարշին. «ԱԶԴԱՆՇԱՆ» Թարգմանութիւն ռուսերէնից. 16 եր. դ. 2 կ.
Բազու 1902 թ.

«Ազգանշանը» („Сигналъ“) Գարշինի ամենայաջող պատմութեանը մէկն է և կրում է նրա համակրելի տաղանդի կնիքը:

Այդ պատմութեանը արդէն մի անգամ Թարգմանուել է հայերէն: Շատ կարելի է, որ այս գրքոյկը նոր Թարգմանութիւն չէ, այլ հնի արտատպութիւն:

Թարգմանութիւնը բաւական յաջող է:

Տ. Յ.

Գիւի դը-Մօպասան. «ՀԱՅՐ ՄԻՆՈՆԸ». Թարգմ. Ա. Տ.-Պ. 15 եր. գինը 2 կոպ.
Բազու 1902 թ.

Պատմութեանը նիւթը վերցրած է ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակից:

Ֆրանսիացի մի ծերուկ, «Հայր Միլոնը», զաղտնի սպանում է գերմանացի զինուորներին, ի վերջոյ բռնուում է և մահուան պատժի ենթարկուում:

Պատմութեանը, ինչպէս Մօպասանի երկերի մեծ մասը, դրուած է խտացած, զօրեղ և մոայլ ոճով:

Թարգմանութիւնը վատ չէ, թէև մէջը պատահում են անհարթութիւններ, որոնք բացատրուում են Թարգմանչի անփորձութեամբ, օրինակ պ. Ա. Տ.-Պ. կարծում է, թէ հայերէն է այսպիսի մի նախադասութիւն. «Ծաղիկների անուշահոտութիւնը խառնուում է բաց ակոռների ծանրաշունչ հոտի և գոլորչու հետ բորբոսնած աղբակոյտի, որի վրայ լիքը հաւեր քշուջ են անում»:

Տ. Յ.

Պրօֆ. Ի. Բերդնիկով. «ՆՈՐ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԸ ԴԵՊԻ ՆՐՈՇՆ» Թարգմ. Գեորգ Ալթունեան. խմբ. Ս. Տիգրանեան. 121 եր. գինը 25 կ. Ալեքսանդրապոլ 1902 թ.

Պրօֆ. Բերդնիկովի գրքոյկի Թարգմանութեամբ լաւ դործի անաջող սկզբնաւորութիւն է դրւում:

Պ. Ա. Տիգրանեան շատ համակրելի միտք է յղացել տալ ընթերցողներին մի շարք հանրամատչելի իրաւաբանական գրքոյկներ: